# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
## «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 09.04.2024թ.
Ժամը 15 [00]

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ, փոխգնդապետ՝ Գ. Սարգսյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ՀՕՊ զորքերի վարչության ՆՏԱ և ԲՊ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ՝ Հ. Սոլախյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Պետրոսյան,
**Բացակայում է՝**
ՀՀ ԶՈՒ ՀՕՊ զորքերի վարչության ՆՏԱ և ԲՊ բաժնի պետ, գնդապետ՝ Կ. Կոստանդյանը:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պողոսյան:

**«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Գ. Պողոսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

---

(Գ. Պողոսյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ |
| 2 | «Ալեռտո» ՍՊԸ |
| 3 | «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ |
| 4 | «Ռեդինետ» ՓԲԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Գ. Պողոսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ՝ «Ալեռտո» ՍՊԸ-ի, մասնավորապես՝

«Ալեռտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում, ընկերության կողմից համակարգ մուտքագրված էլեկտրոնային ֆայլը՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը, վնասված է և «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերջինիս հայտով ներկայացրած ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը գնահատելու հնարավորություն չունի:

2.3 Բոլոր մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) *չհամապատասխանող*, մասնավորապես՝

«Ալեռտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում, ընկերության կողմից համակարգ մուտքագրված էլեկտրոնային ֆայլը՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը, վնասված է և «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերջինիս հայտով ներկայացրած ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը գնահատելու հնարավորություն չունի: Միաժամանակ «Ալեռտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերի 17. կետում նշված է՝ Գաբարիտային չափսեր (երկարություն-լայնություն-բարձրություն, մմ)՝ ոչ ավելի քան 2250X930X1211: Այնինչ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվել է՝ 17.Գաբարիտային չափսեր (երկարություն-լայնություն-բարձրություն, մմ)՝ ոչ ավելի քան 2200X884X1150: Ինչպես նաև «Ալեռտո» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում՝ հավելված 1.1-ում, նշված չեն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող, առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, մոդելը և արտադրողի անվանումը (ապրանքի ամբողջական նկարագիր):

«ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը՝ հավելված 1-ը, հավելված 1.1-ը և հավելված 2-ը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Միաժամանակ «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 2-ը, 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը, ներկայացված է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան՝ գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում թե թվերով թե տառերով լրացված գումարների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունակում լրացված ընդհանուր գումարին: Հաշվի առնելով վերոգրյալը «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ի հայտը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ենթակա է մերժման:

«Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում թե 1-ին, թե 2-րդ և թե 3-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի 4. կետերում նշված են՝ Լարումը՝ 400/230Վ, եռաֆազ, և 12. կետերում նշված են՝ Հաճախականությունը՝ 50 Հց, սակայն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի հրավերով, ընթացակարգի հավելված 1.1-ով թե 1-ին, թե 2-րդ և թե 3-րդ չափաբաժիններով գնման համար պահանջվող ապրանքների տեխնիկական բնութագրերով 4. կետերում պահանջվել են՝ Լարումը՝ 230/400Վ ± 10, եռաֆազ, և 12. կետերում պահանջվել են՝ Հաճախականությունը՝ 50 Հց ± 1,5 %, տեխնիկական հատկանիշներ:

«Ռեդինետ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի 8. կետում նշված է՝ Վառելիքի ծախսը 1 ժամում - 100% ծանրաբեռնվածության դեպքում՝ առավելագույնը- 9,8 լիտր, այնինչ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվել է՝ Վառելիքի ծախսը 1 ժամում - 50% ծանրաբեռնվածության դեպքում - ոչ ավելի քան 4,2 լիտր, 75% ծանրաբեռնվածության դեպքում - ոչ ավելի քան 6,2 լիտր, 100% ծանրաբեռնվածության դեպքում՝ ոչ ավելի քան 8,3 լիտր, ինչպես նաև 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի 18. կետում նշված է՝ ... ուժակուտակիչ մարտկոց - 2 հատ յուրաքանչյուրը 12Վ60Ա..., այնինչ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվել է՝ ... ուժակուտակիչ մարտկոց - 2 հատ յուրաքանչյուրը 12Վ80Ա..., ինչպես նաև 3-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի 8. կետում նշված է՝ Վառելիքի ծախսը 1 ժամում՝ 100% ծանրաբեռնվածության դեպքում- 16,1 լիտր, սակայն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվել է՝ Վառելիքի ծախսը 1 ժամում՝ 50% ծանրաբեռնվածության դեպքում - ոչ ավելի քան 6,7 լիտր, 75% ծանրաբեռնվածության դեպքում - ոչ ավելի քան 10,1 լիտր, 100% ծանրաբեռնվածության դեպքում - ոչ ավելի քան 13,4 լիտր:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 09.04.2024թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

12.04.2024թ. ժամը 15:00 շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Ալեռտո» ՍՊԸ-ն, «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ-ն և «Ռեդինետ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

«ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամանակահատվածում շտկումներ չի ներկայացրել (ընդհանրապես չի ներկայացրել): Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ի հայտը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Գ. Պողոսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| ՀՀ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | գնման գին (պլանավորված (կանխատեսվող) գնման գինը) | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումները | գնային առաջարկները | | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդհանուր գինը |
| 1 | Էլեկտրա-տեխնիկական սարքեր (8-10 կՎտ հզորության էլեկտրակայան) | հատ | 6 | 6 000 000 | «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ | 9 840 000 | 1 968 000 | 11 808 000 |
| 2 | Էլեկտրա-տեխնիկական սարքեր (30 կՎտ հզորության էլեկտրակայան) | հատ | 3 | 12 000 000 | «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ | *8 884 112* | *1 776 822* | *10 660 935* |
| | | | | | «Ալեռտո» ՍՊԸ | 7 200 000 | 1 440 000 | 8 640 000 |
| | | | | | «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ | 8 385 000 | 1 677 000 | 10 062 000 |
| | | | | | «Ռեդինետ» ՓԲԸ | 8 370 000 | 1 674 000 | 10 044 000 |
| 3 | Էլեկտրա-տեխնիկական սարքեր (50 կՎտ հզորության էլեկտրակայան) | հատ | 2 | 12 000 000 | «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ | 8 305 863 | 1 661 173 | 9 967 036 |
| | | | | | «Ալեռտո» ՍՊԸ | 6 100 000 | 1 220 000 | 7 320 000 |
| | | | | | «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ | 7 350 000 | 1 470 000 | 8 820 000 |
| | | | | | «Ռեդինետ» ՓԲԸ | 6 674 000 | 1 334 800 | 8 008 800 |
| 4 | Ճնշակներ (կոմպրեսորներ) (Օդի ճնշակ (կոմպրեսոր) (150մթն)) | հատ | 5 | 7 500 000 | Առաջարկի բացակայություն | | | |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են, բացառությամբ «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ի, մասնավորապես՝

«ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 2-ը, 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը, ներկայացված է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան՝ գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում թե թվերով թե տառերով լրացված գումարների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունակում՝ լրացված ընդհանուր գումարին: Հաշվի առնելով վերոգրյալը «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ի հայտը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ենթակա է մերժման:

3.3 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն կազմակերպվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.**

---

(Գ. Պողոսյան)

4.1 17.04.2024թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ, ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում՝ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Ալեռտո» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.3 Քանի որ ներկայացված գինը 1-ին չափաբաժնի մասով գերազանցում է գնումն իրականացնելու համար նախատեսված գնման գինը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը վերը նշված չափաբաժնի մասով հայտարարել չկայացած: «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ**

---

(Գ. Պողոսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)՝ Գ. Սարգսյան

Գնահատող՝ Հ. Սոլախյան

Գնահատող՝ Ա. Պետրոսյան

Գնումները համակարգող՝ Գ. Պողոսյան